ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

375010, Երևան, Խորհրդարանի փ., 8
Հեռ.՝ 58-19-97

22

No 4517 «05» 11 1996 թ.

ՔԱՂ. Ս.ՇԱՀԻՆՅԱՆԻՆ
(ք.Երևան,Մարշալ Բաղրամյան 40)

,,Հասարակական կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ վերադարձվում է ,,Հայաստանի ամերիկյան համալսարանի շրջանավարտների ընկերակցություն,, հասարակական կազմակերպության կանոնադրության գրանցման փաստաթղթերը այն նշված օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ,ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Վ.ՄԱՆԱՍԱՐՅԱՆ

Հաստատված է՝
Հայաստանի ամերիկյան համալսարանի
շրջանավարտների ընկերակցության
հիմնադիր ժողովում՝
23-ը մարտի, 1996 թ.
Ընկերակցության նախագահ՝
Սուրեն Շահինյան

Գրանցված է՝
ՀՀ Արդարադատության նախարարության
կոլեգիայի
..... որոշմամբ
.... 1996 թ.
Նախարարի տեղակալ՝
Տ. Պետրոսյան

Հայաստանի ամերիկյան համալսարանի
շրջանավարտների ընկերակցության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1. Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) շրջանավարտների ընկերակցությունը (հետագայում՝ Ընկերակցություն) ինքնակառավարվող, անկախ հասարակական կազմակերպություն է, որը կամավորական հիմունքներով միավորում է իր անդամներին, Հայաստանում և Հայաստանից դուրս նրանց իրավունքները պաշտպանելու և ընդհանուր շահերը ներկայացնելու նպատակով:

Ընկերակցությունն իր գործունեությունը իրագործում է համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, գործող օրենսդրության, ՀՀ կողմից կնքված միջազգային պայմանագրերի և սույն Կանոնադրության:

1.2. Ընկերակցության իրավաբանական հասցեն է՝ Երևան, Բաղրամյան փող 40:

1.3. Ընկերակցությունը իր գործունեությունը իրականացնում է լրիվ տնտեսական հաշվարկի, ինքնաֆինանսավորման և ինքնակառավարման սկզբունքներով: Ընկերակցությունը չի հետապնդում քաղաքական նպատակներ և չի հարում որևէ քաղաքական հոսանքի:

1.4. Ընկերակցության անվանումն է՝

հայերեն՝	Հայաստանի ամերիկյան համալսարանի շրջանավարտների ընկերակցություն
ռուսերեն՝	Ассоциация Выпускников Американского Университета Армении
անգլերեն՝	American University of Armenia Alumni Association

1.5. Ընկերակցությունն իր կանոնադրության գրանցման օրվանից համարվում է իրավաբանական անձ, ունի իր անվամբ կնիք և դրոշմակնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, խորհրդանշան, օժտված է իրավաբանական անձին հատուկ այլ հատկանիշներով:

1.6. Ընկերակցության հիմնադիրներն են ՀԱՀ-ի երեք քոլեջների (Գործարար ղեկավարման, Ճարտարագիտության և Քաղաքական գիտության) 1993, 1994, 1995թթ. շրջանավարտները:

2. Ընկերակցության նպատակներն ու հիմնական խնդիրները

2.1. Ընկերակցության նպատակներն են՝

2.1.1. Աջակցել Հայաստանի Հանրապետության պետականության կայացման, ժողովրդավարական հիմքերի և շուկայական հարաբերություններով ուղղորդվող տնտեսության զարգացման գործին,
2.1.2. Նպաստել ՀԱՀ-ի շրջանավարտների մասնագիտական, հասարակական ու քաղաքացիական կայացմանն ու կատարելագործմանը,
2.1.3. Նպաստել ՀԱՀ-ի հետագա զարգացմանը, ինչպես նաև նրա կապերի ընդլայնմանը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

2.2. Ընկերակցության հիմնական խնդիրներն են՝

2.2.1. Ներկայացնել և պաշտպանել ՀԱՀ-ի շրջանավարտների շահերը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում,
2.2.2. Խթանել և օժանդակել ՀԱՀ-ի շրջանավարտների ինքնուրույն մասնագիտական գործունեությանը, նպաստել նրանց մասնագիտական կատարելագործման հնարավորությունների ընդլայնմանը,
2.2.3. Նպաստել ՀԱՀ շրջանավարտների ներգրավմանը ՀՀ տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերում և նախագծերում, օժանդակել շրջանավարտների կողմից նմանատիպ ինքնուրույն ծրագրերի մշակմանը և իրականացմանը,
2.2.4. Կազմակերպել բարեգործական միջոցառումներ ՀԱՀ-ին ֆինանսական և տեխնիկական օժանդակություններ հանգանակելու նպատակով:

3. Ընկերակցության անդամները

3.1. Ընկերակցության անդամները կարող են ունենալ հետևյալ երեք կարգավիճակներից որևէ մեկը
-- լիիրավ անդամ
-- մասնակից անդամ
-- պատվավոր անդամ:

3.2. Ընկերակցության լիիրավ անդամ կարող են դառնալ մագիստրոսի կոչում ստացած ՀԱՀ-ի այն շրջանավարտները, ովքեր ընդունում են ընկերակցության կանոնադրությունը և կանոնավոր վճարում ընդհանուր ժողովի կողմից որոշված անդամավճարը:

3.3. Մասնակից անդամի կարգավիճակով ընկերակցությանը կարող են անդամագրվել ՀԱՀ-ում առնվազն երեք ուսումնական քառորդ ուսանած անձինք:

3.4. Պատվավոր անդամի կարգավիճակ ընկերակցության տնօրենների խորհրդի առաջարկով ընդհանուր ժողովի կողմից շնորհվում է ՀԱՀ-ի դասախոսական անձնակազմին, վարչական ղեկավարներին և ՀԱՀ-ի զարգացման գործում նշանակալի ներդրում կատարած այլ անձանց:

3.5. Ընկերակցությանը լիիրավ անդամի կարգավիճակով անդամագրվել ցանկացողները պետք է ծանոթանան ընկերակցության կանոնադրության դրույթներին և դիմում ներկայացնեն ընկերակցության տնօրենների խորհրդին:

3.6. Ընկերակցության անդամակցմանը չեն կարող խոչընդոտել քաղաքացիությունը, սեռը, տարիքը, ազգությունը, դավանանքը:

4. Ընկերակցության անդամների իրավունքները և պարտականությունները: Ընկերակցությանը անդամագրման և անդամությունից դուրս գալու կարգը

4.1. Ընկերակցության բոլոր անդամները ունեն հավասար իրավունք՝

4.1.1. Մասնակցելու ընկերակցության կողմից կազմակերպված միջոցառումներին,
4.1.2. Սպառիչ տեղեկություն ստանալու ընկերակցության գործունեության բոլոր բնագավառների մասին,
4.1.3. Մասնակցելու ընկերակցության նախաձեռնած նախագծերի մշակման և իրականացման աշխատանքներին,
4.1.4.Նախաձեռնելու ինքնուրույն նախագծեր:

4.2. Միայն Ընկերակցության լիիրավ անդամներն իրավունք ունեն՝

4.2.2. Ընտրելու և ընտրվելու ընկերակցության ղեկավար մարմիններում, մասնակցելու ընկերակցության ընդհանուր ժողովի որոշումների ընդունմանը քվեարկման ձայնի իրավունքով:

4.3. Ընկերակցության լիիրավ անդամները պարտավոր են՝

4.3.1. Կատարել ընկերակցության կանոնադրական դրույթները և ղեկավար մարմնի որոշումները,
4.3.2. Կանոնավոր վճարել ընդհանուր Ժողովի կողմից սահմանված անդամավճարը:

4.4. Ընկերակցության կանոնադրության դրույթները խախտող անդամի նկատմամբ ընկերակցության տնօրենների խորհուրդը կարող է կիրառել կարգապահական տարբեր տույժեր (ընդհուպ մինչև անդամակցության ժամանակավոր կասեցում) և ընդհանուր ժողովին ներկայացնել վերջինիս ընկերակցությունից հեռացնելու առաջարկություն:

5. Ընկերակցության կառուցվածքը և ղեկավար մարմինները

Ընկերակցության բարձրագույն մարմինը անդամների ընդհանուր ժողովն է:

5.1. Ընդհանուր ժողովը ընտրում է Ընկերակցության նախագահ, տնօրենների խորհուրդ և վերստուգիչ հանձնաժողով:

5.2. Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում Ընկերակցության ղեկավարումը իրականացվում է տնօրենների խորհրդի կողմից:

5.3. Ընկերակցության տնօրենների խորհուրդը և նախագահը իրենց գործունեության համար հաշվետու են ընդհանուր ժողովին:

5.4. Ընկերակցության վերահսկիչ մարմին է հանդիսանում վերստուգիչ հանձնաժողովը, որը հաշվետու է ընդհանուր ժողովին:

6. Ընդհանուր ժողովը

6.1. Ընդհանուր ժողովը հրավիրվում է տարին մեկ անգամ՝ աշնանը: Անհրաժեշտության դեպքում արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրվել՝ նախագահի, տնօրենների խորհրդի կամ բոլոր անդամների մեկ երրորդի պահանջով:

6.2. Ընդհանուր ժողովի մասին բոլոր անդամները պետք է տեղեկացվեն ընդհանուր ժողովի օրվանից առնվազն երկու շաբաթ առաջ:

6.3. Ընդհանուր ժողովի կայացման համար անհրաժեշտ է լիիրավ անդամների 25%-ի ներկայությունը: Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդհանուր ժողովի որոշմամբ որոշ հարցերի ընդունումը կարող է իրականացվել փակ գաղտնի քվեարկությամբ:

6.4. Եթե Ընկերակցության լիիրավ անդամը ֆիզիկապես չի կարող մասնակցել ընդհանուր ժողովին, ապա նա միայն բաց քվեարկությունների դեպքում կարող է, նախապես տեղեկացնելով տնօրենների խորհրդին, իր ձայնի իրավունքը լիազորել ներկա լիիրավ անդամներից որևէ մեկին:

6.5. Ընկերակցության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

6.5.1. Ընկերակցության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը,
6.5.2. Տնօրենների խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի անդամների, անդամության թեկնածուների և նախագահի ընտրությունը,
6.5.3. Տնօրենների խորհրդի հաշվետվության ընդունումը,
6.5.4. Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվության ընդունումը,
6.5.5. Ընկերակցության լուծարումն ու վերակազմավորումը,
6.5.6. Ընկերակցության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը:

7. Տնօրենների խորհուրդը

Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում կազմակերպում և ղեկավարում է Ընկերակցության գործունեությունը:

7.1 Տնօրենների խորհուրդը ընտրվում է մեկ տարի ժամկետով, փակ գաղտնի քվեարկությամբ:

7.2. Տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից մեկ ցուցակով երկու եղանակով՝ ներկայացուցչական՝ ըստ քոլեջների, և մեծամասնական: Սկզբում՝ ներկայացուցչական եղանակով ընտրվում են բոլոր քոլեջներից երկուական ամենաշատ "կողմ" ձայն հավաքած թեկնածուները: Այնուհետև, նույն թվաքանակով, մեծամասնական եղանակով ընտրվում են ցուցակում հաջորդ ամենաշատ "կողմ" ձայներ հավաքած թեկնածուները:

7.3. Տնօրենների խորհուրդը իր կազմից ընտրում է նախագահի տեղակալին, քարտուղարին և գանձապահին:

7.4. Տնօրենների խորհրդի ժողովները հրավիրվում են ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ:

7.5. Ընկերակցության տնօրենների խորհրդի ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին:

7.6. Տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

7.7. Տնօրենների խորհրդի արտահերթ ժողով կարող է հրավիրվել նախագահի կամ խորհրդի անդամների 1/4-ի պահանջով:

7.8. Բացի խորհրդի լիիրավ անդամներից, տնօրենների խորհրդի մեջ խորհրդատվական ձայնի իրավունքով մտնում են նաև հետևյալ պատվավոր անդամները՝ ՀԱՀ-ի նախագահը, բոլոր քոլեջների դեկանները, ՀԱՀ-ի վարչության տնօրենը: Տնօրենների խորհուրդը կարող է ներկայացնել ընդհանուր ժողովի հաստատմանը տնօրենների խորհրդի այլ պատվավոր անդամների թեկնածություններ:

7.9. Տնօրենների խորհրդի որևէ անդամի հիվանդության, բացակայության կամ նրա պարտականությունների կատարումը անհնարին դարձնող այլ պայմանների առկայության դեպքում տնօրենների խորհրդի որոշումով նրան փոխարինում է վերջին ընդհանուր ժողովի ընտրական ցուցակում հաջորդ առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:

7.10. Ընկերակցության տնօրենների խորհրդի իրավասության հարցերն են՝

7.10.1. Ընկերակցության ինքնուրույն նախագծերի մասին որոշումներ կայացումը,
7.10.2. Օրենքով սահմանված կարգով մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների ստեղծումը ՀՀ-ում և արտերկրում,
7.10.3. Ծրագրերի վրա հիմնված աշխատանքային խմբերի ստեղծումը կամ հաստատումը
7.10.4. Դուստր ձեռնարկությունների ստեղծումը, վերակազմավորումը և լուծարումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
7.10.5. Ընդհանուր ժողովին վերջինիս բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի լուծման համար առաջարկությունների ներկայացումը,
7.10.6. Բացառությամբ ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված ցանկացած այլ հարցերի քննումը և լուծումը:

8. Ընկերակցության Նախագահը

8.1. Ընկերակցության Նախագահը

8.1.1 Իրականացնում է Ընկերակցության ընդհանուր ղեկավարումը և կոորդինացնում է նրա գործունեությունը,
8.1.2. Հրավիրում և վարում է Ընկերակցության տնօրենների խորհրդի նիստերը, ստորագրում դրանց արձանագրությունները և ընդունված որոշումները,
8.1.3. Իրավասության սահմաններում Ընկերակցությունը ներկայացնում է պետական իշխանության, կառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում,
8.1.4. Ընկերակցության անունից անում է հայտարարություններ,
8.1.5. Օգտագործում է ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի որոշումներով նրան վերապահվող այլ լիազորություններ:

8.2. Ընկերակցության նախագահը ուղղակիորեն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ և հանդիսանում է տնօրենների խորհրդի անդամ:

8.3 Նախագահի հիվանդության, բացակայության կամ նրա պարտականությունների կատարումը անհնարին դարձնող այլ պայմանների առկայության դեպքում նրա բոլոր պարտականությունները և իրավասությունները փոխանցվում են նախագահի տեղակալին:

9. Վերահսկիչ հանձնաժողովը

9.1. Վերահսկիչ հանձնաժողովը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ յուրաքանչյուր քոլեջից մեկական ներկայացուցիչ:

9.2. Վերահսկիչ հանձնաժողովը վերահսկում է ընկերակցության ֆինանսատնտեսական գործունեությունը և տնօրենների խորհրդի որոշումների և գործունեության համապատասխանությունը ընկերակցության կանոնադրությանը:

9.3. Վերահսկիչ հանձնաժողովը ներկայացնում է տարեկան հաշվետվություն ընդհանուր ժողովին:

9.4. Վերահսկիչ հանձնաժողովի կազմից նրա անդամների կողմից ընտրված նախագահը մասնակցում է տնօրենների խորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով:

9.5. Վերահսկիչ հանձնաժողովը ստուգումներ է անց կացնում ոչ պակաս քան տարին մեկ անգամ՝ սեփական նախաձեռնությամբ կամ Ընկերակցության նախագահի, տնօրենների խորհրդի կամ ընդհանուր ժողովի առաջարկությամբ:

10. Ընկերակցության ունեցվածքն ու ֆինանսական միջոցները:

10.1. Ընկերակցության միջոցները գոյանում են՝

10.1.1. Ընկերակցության անդամների մուտքի և անդամակցության վճարներից,
10.1.2. Հանգանակութուններից և նվիրատվություններից,
10.1.3. ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներից:

10.2. Ընկերակցության գույքը և միջոցները տնօրինում է տնօրենների խորհուրդը: Դրանք օգտագործվում են կանոնադրությամբ նախատեսված խնդիրների և նպատակների իրականացման համար: Օգտագործման կարգը որոշում է տնօրենների խորհուրդը և հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:

11. Ընկերակցության գործունեության լուծարման կարգը

11.1. Ընկերակցությունը կարող է լուծարվել Ընկերակցության ընդհանուր ժողովի որոշմամբ, ձայների 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.2. Ընկերակցության գործունեության դադարեցման դեպքում ընդհանուր ժողովի կողմից ստեղծվում է լուծարքային հանձնաժողով, որը գնահատում է միության գույքն ու միջոցները, կատարում է վերջնահաշվարկ և մարում միության բոլոր ֆինանսական պարտավորությունները: Գույքի և ֆինանսական միջոցների հետագա տնօրինման հարցերը որոշում է լուծարքային հանձնաժողովը:

14. Եզրափակիչ դրույթներ

14.1. Սույն Կանոնադրության մեջ Ընկերակցությանը վերաբերող դրույթների լրացումներ եւ փոփոխություններ կատարվում են այն կարգով, որով և հաստատվել է սույն Կանոնադրությունը:

14.2. Այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնադրությամբ, կարգավորվում են գործող օրենսդրությամբ: